

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵԲ-ԳՀԾՁԲ-19/114 >>

ք. Երևան

«01» «օգոստոսի» 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Մկրտչյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով
1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր հրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032098379
ՀՎՀՀ 02593108

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ԷԼԻՏ ԷՍՎԵՆՆԻՆԻՆԻ
Հասցե՝ ք. Երևան, Ս. Դավթի 13/27
Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342

Է. Կիրակոսյան



(ստորագրություն)
Կ.Տ

Ս. Մկրտչյան

(ստորագրություն)



Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայություն			ՀՀ դրամ	
			Չափման միավոր	ընդհանուր գինը/ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	Ժամկետը
1	5011170/20	Արտասահմանյան արտադրության մակնիշի ա/մ (Toyota Corolla 1,6 GAS) արտ. 2017թ. ծառայողական ավտոմեքենայի ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում	ծառայություն	Մինչև 500000	1	Նոր Նորք վարչական շրջան	Նախատեսվում է գնել 2019 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ պատվիրատուի կողմից ներկայացված ցանկացած պահանջի դեպքում:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 Երևանի քաղաքապետարան
 ք. Երևան, Արգիշտիի փ. 1
 Կենտրոնական գանձապետարան
 Հ/Հ 900032098379
 ՀՎՀՀ 02593108

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
 Հասցե՝ ք. Երևան, Ս. Դավթի 13/27
 Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 1570030407870200
 ՀՎՀՀ 00465342

Է. Կիրակոսյան
 (ստորագրություն)


Ս. Մկրտչյան
 (ստորագրություն)


ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ *

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության														
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը		
1	50111170/20	ծառայողական ավտոմեքենայի ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերում	100000	100000	500000	500000	500000	500000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
 Երևանի քաղաքապետարան
 ք. Երևան, Արգիշտիի փ. 1
 Կենտրոնական գանձապետարան
 Հ/Կ 900032098379
 ՀՎՀՀ 02593108

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
 ԷԼԻՏ ԷՍՎԵՍ ՍՊԸ
 Հասցե՝ ք. Երևան, Ս. Դավթի 13/27
 Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ
 Հ/Կ՝ 1570030407870200
 ՀՎՀՀ 00465342

Է. Կիրակոսյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.



Ս. Մկրտչյան
 (ստորագրություն)
 Կ.Տ.



Հ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չափաբաժնի անվանումը	
		Արտասահմանյան արտադրող-թյան մակնիշի անվանումը (Toyota Corolla 1,6 GAS) արտ. 2017թ.	
1	Բռնկման համակարգի ստուգում		
2	Կցորդման համակարգի ստուգում		
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում		անվճար
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում		անվճար
5	ABS համակարգի ստուգում		անվճար
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում		անվճար
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում		անվճար
1. Շարժիչ			
8	Շարժիչի հանում և տեղադրում		
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում		40000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով		1
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով		20000
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով		1
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում		1
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում		1
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ		1
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ		20000
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում		1
18	Ծնկածն լիսեռի հղկում		1
19	Ծնկածն լիսեռի փոխարինում		1
20	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ		1
21	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում		10000
22	Ծնկածն լիսեռի ուղղում		1
23	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում		1
24	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում		10000
25	Շարժիչի բլոկի փոխարինում		10000
26	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ		1
27	Շարժիչի բլոկի հղկում		1
28	Մխոցի փոխարինում 1 հատ		1
29	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում		1
30	Բաշխիչ լիսեռի ակնոցների հանում և տեղադրում կամ փոխարինում		10000
31	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում		1
32	Փոկանիվի փոխարինում		1
33	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում		1
34	Շարժիչի շղթայի փոխարինում		1
35	Յուղի մղիչի շղթայի փոխարինում		15000
36	Շարժիչի վանոսների փոխարինում		1
37	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)		1
38	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով		1
39	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում		1
40	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով		10000
41	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում		1
42	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում		1
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում		1
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում		1
45	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում		1
46	Յուղի ծորակի փոխարինում		1
47	Օդաքաշակ փողրակի փոխարինում		1
48	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմղիչ)		1
49	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում		1
50	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում		5000
51	Ռոդորդիչ վոանների փոխարինում		10000
52	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում		1
53	Շարժիչի կափույրի փոխարինում		1
54	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում		1
55	Մխոցամատի փոխարինում		1
56	Շարժիչի շարժաթևի փոխարինում		1
57	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ		1
58	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում		20000
59	Ատամնանիվի փոխարինում		1
60	Ատամնանիվի փոկի փոխարինում		1
61	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում		1
62	Սովարիկ փոխարինում		1
63	Շարժիչի կալունի փոխարինում		1
64	Շարժիչի հանդարտիչի փոխարինում		1
65	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում		5000
66	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում		1
67	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում		1

68	Շարժիչի առջևի կախարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	
69	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քգտ) իրանի փոխարինում	10000
70	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	1
71	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	5000
72	Շարժիչի գամասեղի փոխարինում	1
73	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	1
74	Գլխիկի հեղույսի փոխարինում	1
75	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	1
76	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	1
77	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	1
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		10000
78	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	
79	Ավտոմեքենայի յուղում	3000
80	Համակարգչային ախտորոշում, թերույթյունների վերագամբ	1
81	Յուղի ռադիատորի փոխարինում	5000
82	Յուղի ռադիատորի նորոգում	1
83	Յուղի գտիչի փականի փոխարինում	1
84	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
85	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
86	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	1
87	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	1
88	Վառելիքի փողրակի փոխարինում	1
89	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	1
90	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	10000
91	Օդի գտիչի փոխարինում	1
92	Կոնդիցիոների գտիչի փոխարինում	3000
93	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
94	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	5000
95	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	1
96	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում	1
97	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
98	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ	1
99	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	1
100	Բոցամուղի կողավորում	10000
101	Ինժեկտորի բոցամուղի խտրուկների փոխարինում	1
102	Բենզամուղիչի փոխարինում	1
103	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	5000
104	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
105	Բռնկման կարգավորում	1
106	CO կարգավորում	1
107	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
108	Ղեկավարման բլոկի վերանորոգում	1
109	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
110	Վառելիքի բաքի մաքրում	1
111	Արագարարի ոտնակի փոխարինում	1
112	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	1
113	Օդի ծախսի տվիչի փոխարինում	1
114	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
115	Տրամյորի վերանորոգում	1
116	Ջրի քերմաստիճանի տվիչի փոխարինում	1
117	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	1
118	Բենզոքաքի բենզոմուղիչի գանցի փոխարինում	3000
119	Բենզոքաքի բենզոմուղիչի գանցի մաքրում	5000
120	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	1
121	Տվիչի փոխարինում	1
3. Սառեցման և արտածման համակարգ		3000
122	Հովհարի փոխարինում	
123	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
124	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
125	Ռադիատորի շրջանակի փոխարինում	1
126	Շերտափեղկի փոխարինում	1
127	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	1
128	Ռադիատորի կալունակի փոխարինում	1
129	Ռադիատորի փողրակի փոխարինում	1
130	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
131	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
132	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	1
133	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	1
134	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	1
135	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	1
136	Ընդարձակող բաքի փոխարինում	1
137	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1
138	Ջրի ծորակի փոխարինում	1
139	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	1
140	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1
141	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
142	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	1

143	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները բնօրգրված	
144	Վառարանի ռադիատորի նորոգում	1
145	Վառարանի շարժիչի փոխարինում	
146	Թերմոստատի փոխարինում	1
147	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	1
148	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	5000
149	Գններատորի փոկի փոխարինում	5000
150	Գններատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	1
151	Ջրի ռադիատորի վերանորոգում	5000
152	Թերմոստատի միջադիրի փոխարինում	5000
153	Սառեցման համակարգի օդահանում	1
154	Խլարարի գոֆրայի փոխարինում	1
155	Կատայիզատորի հանում	1
156	Խլարարի կատայիզատորի տվիչի փոխարինում	1
157	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
158	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	1
159	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1
160	Խլարարի ներդիրի փոխարինում	1
161	Խլարարի կախոցի փոխարինում	1
162	Կայունակի փոխարինում	1
163	Ռեզոնատորի փոխարինում	1
164	Հովացման հեղուկի փոխարինում	1
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
165	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
166	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	1
167	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	1
168	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000
169	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
170	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
171	Կցորդման երկժանիի փոխարինում	1
172	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	1
173	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	1
174	ՓՏ-ի փոխարինում	1
175	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	1
176	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	1
177	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	1
178	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	1
179	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	1
180	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
181	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1
182	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	1
183	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	1
184	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	1
185	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	1
186	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	1
187	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	1
188	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	1
189	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	1
190	ՓՏ-ի յուղի փոխարինում	1
191	Վազբաչակի շարժաբերի փոխարինում	1
192	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	1
193	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում	1
194	ԱՓՏ-ի փոխարինում	1
195	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	1
196	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
197	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	1
198	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կայունակի փոխարինում	1
199	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	1
200	ԱՓՏ-ի համակարգչի և սոլենոիդների փոխարինում	1
201	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	1
202	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	1
203	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	1
204	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	1
205	ԱՓՏ-ի հիդրոագուլցի փոխարինում	1
206	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	1
207	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	5000
208	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով	5000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
209	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	1
210	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
211	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	1
212	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	1
213	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	1
214	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	1
215	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	1

216	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	
217	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	
218	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	1
219	Բաշխիչ տուփի երկրորդային փոխարինում	1
220	Բաշխիչ տուփի բարձրակարգի փոխարինում	1
221	Բաշխիչ տուփի խտանքային փոխարինում	1
222	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	1
223	Կարգանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
224	Կարգանային լիսեռի խաչուկի փոխարինում	1
225	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
226	Տվիչի փոխարինում	1
227	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	1
228	Կարգանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
229	Բաշխիչ տուփի շրթայի փոխարինում	1
6. Առջևի և հետևի կամրջակներ		
230	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
231	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	1
232	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	1
233	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	1
234	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտանքակալի փոխարինում	1
235	Կամրջակի լուղի փոխարինում	1
236	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
237	Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	1
238	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	1
239	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	1
240	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
241	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	1
242	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	1
243	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	1
244	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	1
245	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտանքակալի փոխարինում	1
246	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
247	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	1
248	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	1
249	Կամրջակի տվիչի փոխարինում	1
250	Կամրջակի իրանի փոխարինում (փցսՍՍ)	1
251	Կամրջակի լուղի փոխարինում	1
7. Կախոց		
252	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
253	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000
254	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
255	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
256	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
257	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
258	Անվակունդի գամասեղի և հեղուկի փոխարինում(մեկ անիվի համար)	1
259	Ձախ կամ աջ հողակալի խտանքակալի փոխարինում	1
260	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000
261	Առջևի գսպանակի փոխարինում	1
262	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
263	Պենմոնցամեղմիչի փոխարինում	1
264	Պենմոնցամեղմիչի բարձիկների փոխարինում	1
265	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1
266	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
267	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	1
268	Ներքևի լծակի հեղուկի փոխարինում	5000
269	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	1
270	Անիվների պաշտպանիչի փոխարինում	10000
271	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	1
272	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
273	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	1
274	Վերևի լծակի հեղուկի փոխարինում	5000
275	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	1
276	Գնդե հողակալի պատյանի փոխարինում	5000
277	Գնդե հողակալի փոխարինում	1
278	Գնդե հողակալի նորոգում	5000
279	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
280	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1
281	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	5000
282	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	1
283	Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում	5000
284	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	1
285	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	5000

286	Հետևի կայունարարի կայունակի փոխարինում	
287	Հետևի զսպանակների փոխարինում	
288	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
289	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
290	Զսպանի փոխարինում	1
291	Զսպանի վրանների փոխարինում 1 հատ	5000
292	Հետևի գնցամեղմիչի փոխարինում	1
293	Հետևի հարվածամեղմիչի վրանների փոխարինում	1
294	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	5000
295	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում	1
		1
8. Ղեկային մեխանիզմ		5000
296	Ղեկասյունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	
297	Ղեկասյունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	1
298	Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային տնու փոխարինում	1
299	Ղեկասյունակի(USuSվՍՈ) խաչուկի փոխարինում	1
300	Ղեկասյունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	1
301	Ղեկասյունակի(USuSվՍՈ) քանոն, արատավորում, հավաքում	1
302	Ղեկասյունակի(USuSվՍՈ) կարգավորում	1
303	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	1
304	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	1
305	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի փոխարինում	5000
306	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի նորոգում	1
307	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	1
308	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	1
309	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	1
310	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	1
311	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	1
312	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	1
313	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	1
314	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	1
315	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
316	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	1
317	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	1
318	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
319	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	1
320	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	1
321	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
322	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	3000
323	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	1
324	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	1
325	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
326	Ղեկային ձողի գնդե հողակալի նորոգում	1
327	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	1
328	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	5000
329	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	1
330	Հիդրոուժեղարարի համակարգի լուղի փոխարինում	5000
9. Արգելակային համակարգ		1
331	Վակումային ուժեղարարի փոխարինում	1
332	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	1
333	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
334	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	1
335	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
336	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	1
337	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
338	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
339	Առջևի սուպպորտի վերանորոգում	3000
340	Հետևի սուպպորտի վերանորոգում	1
341	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	1
342	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	1
343	Արգելակային փողակի փոխարինում	1
344	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	1
345	Արգելակային համակարգի օդահանում	5000
346	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	1
347	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	5000
348	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
349	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	5000
350	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում 1 հատ	5000
351	Հետևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ	5000
352	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
353	ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
354	ABS-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	1
		1

355	ABS-ի տվիչի փոխարինում	
356	ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում	1
357	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
358	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	5000
359	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում	?
360	Ձեռքի արգելակի ճապանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1
361	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	1
362	Հետևի արգելակների կարգավորում	1
363	Արգելակային համակարգի լվացում	1
364	Արգելակային հեղուկի փոխարինում	1
10. Էլեկտրասարքավորում		
365	Գններատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	1
366	Գններատորի քանդում և արատավորում, հավաքում	5000
